4158

114

281·6
U-98

1910

2010

1942 (114)

ՄԵՐ ՀԱՄԵՍՏ ՊԱՏԱՍԽԱՆԸ.

Երևանոյ սբ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցւոյ Նախկին Երեցփոխ պարոն Դ. Պոպովին իւր № 9-ն հաշուետետրի առթիւ յընթացս 1909 թուի տպուած ներկայ 1910 թ. Դեկտեմբեր ամսում պարոն Է. Տէր. Գրիգորեանցի տպարանում։

281.6
U-98

Ц-5 ѵ47

280
1011-ՍՈՒ

281.6
Ս-98

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
именна Мясникиана
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՄԵՐ ՀԱՄԵՍՏ ՊԱՏՍԽԱՆԸ.

Երևանոյ սբ. Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Եկեղեցւոյ նախկին Երեցփոխ պարոն Դ. Պոպովին իւր № 9-ն հաշուետետրի առթիւ յընթացս 1909 թուի տպուած ներկայ 1910 թ. Դեկտեմբեր ամսում պարոն Է. տէր. Գրիգորեանցի տպարանում։

1005
20569

2012

11465

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Աշխարհում իւրաքանչիւր բոյս ու կենդանի կերակրվում է իրեն յատուկ բնիկ կերակրով։ Մարդն է միայն, որ կերակրվում է բուսական ու կենդանական հարստութիւնները անխտիր վայելելով։

Մսակեր կենդանիները կռուող, գիշատող, անողորմ ու արիւնարբու են։ Խոտակեր կենդանիք այդպիսի հակումն չ'ունեն։ Նոքա հեզ, մարմաջիւն, շողոմքոր ու ընտել բնաւորութեամբ դուրեկան են մարդկանց։ Մարդն է միայն, որ կենդանական ու բուսական հարստութիւններով իւր մարմնակազմի լրութիւնն է բովանդակում խառն բնաւորութեամբ, որով արտաբերվում է մարդը իւր հոգեոյ խառը կրքերով, այն է, կռուող, գիշատող, անողորմ, արիւնարբու, հեզ, մարմաջիւն, ընտել ու շողոմքոր։ Որը որոշ մամենդների ժամանակ՝ ին'չ և ին'չ կենդանիք բարուց նմանուելը ակնյայտնի կերպով ցոլացվում է։ Նախապատմական մարդիք այդպէս չ'էին։ Նոքա մսակերութիւն չ'ըգիտէին, բուսական հարստութիւնից վայելում էին այնպիսիները, որոնք գրգիռներ յարուցանելու զօրութիւն չ'ունէին։ Նախապատմական մարդկանց ոսկեայ ժողովուրդ անունով են կնքել երջանկայիշատակ պատմաբանները Պլուտարքոս, Եւսիբիոս, Անիքսամանդր, Սանքոնեաթոն և այլն։ Հիւսիսային մարդիք մսակերներ են ու կռուարար, արիւն վոթող, պատերազմող, անժուժկալ, անմարդասէր, անողորմ։ Իսկ հարաւային մարդիք ընդ հակառակը, որովհետև սակաւ մսակերներ են։ Մենք չ'պիտի զարմանանք, որ մեզանում առ հասարակ մեր առօրեայ կենցաղի գոր-

ծերը գնում են հակառակ լաւագոյն ցանկութիւնների, չնայելով որ գործերի հակառակ ընթացքը մենք ենք ստեղծում։ Հանդարտ ապրելը մեր մարմնակազմի և հոգւոյ շուքը չ'ի ընդունում. որովհետև ամեն օր միս ենք կրծում, որով և մեր հոգւոյ կրից տրամադրութիւնը մեզ մղում է դէպի գազանավարութիւն, կայացած մսակերների ընոյթ էութեամբ։ Ուրեմն կամ սխալ է այն վկայութիւնը մարդկանց վերաբերմամբ. որ ասուել է թէ սիրուն, գեղեցիկ ու համաչափ կազմուածքի մէջ է ամփոփում, ազնիւ բարուց ոգին-հոգին, և կամ այս վկայութիւնը մնացածէ շատ հին ժամանակներից, երբ մարդիք մսակեր չ'էին։

Հ ե ղ ի ն ա կ

Արջք օրհասակաճք պնդաղոյնս մարեցին, ճարին ոչ զգան, հարկանին ոչ իմանան։

„Եղիսէ պատմագիր"

Երևանայ Սբ. Գրիգոր լուսաւորիչ եկեղեցւոյ նախկին երեցփոխ պ. Դիմիտր Պոպովի մեր հասցէին թափած լուտանքը իւր № 9. հաշիւ Երևանայ ս. Գրիգոր լուսաւորիչ մայր Եկեղեցւոյ, յընթացս 1909 թիւ գրքոյկով, տպագրուած ներկայ 1910 թիւ Դեկտեմբեր ամսում պ. Էմին տէր Գրիգորեանցի տպարանում, թերթեցինք ու կարդացինք։ Պ. Պոպովը իւր հաշուետետրով հանդէս է եկել իւր իսկ հոգերանութեամբ, հարուածելով և քահանաներին, և կոնսիստորեային, և Սինոդին, և տեղակալին և կաթողիկոսին և բոլոր հայ ազգին, իրեն էլ հետը։ Պ. Պոպովը այս բոլորին ատելուց յետոյ՝ իրեն գցեց այն սխալ ցնորքների մէջ. որ 1909 թ. Նոյեմբերի 4-ի գիշերը իւր նախկին ընկերոջ տունը խուզարկուեց, 'ի փափակ և 'ի պարծանս կրօնասէր և կարգապահ երեցփոխի...։ Բայց մենք անցեալն էանց ասելով՝ դիմացանք ու համբերեցինք, որ հերսոտութիւնից բղխած չարիքը մի կերպ խափանուի։ Բայց

վրեժառութեան կիրքը, որ յատուկ է գիշատիչ կենդանիներին՝ չհանգաՀ, չ՚մարեց մարդու ազնիւ հոգւոյն մէջ։

Մենք չ՚ենք խօսում. երեցփոխի պաշտօնին իշտահը սրած ու նմանների մասին, որից հանդամանքների բերմամբ յետ քաշուեց շատերից և ինձնից յարգուած պ։ Դ. Պապով և որի հայհոյանքներն ու զրպարտութիւնները յատուկ իմ վերաբերմամբ է, մի ինչ որ ինձ անհասկանալի գաղտնիքով։ Յիշեալ հաշուետետրում Պապովը իւր չ՚եղած քաջագործութիւնները մատնահաշիւ տալուց յետոյ հայ հասարակութեանն է հաւարի կանչում, որ իւր շաղակրատ սիանների հրապուրանքներով տէր Գրիգորին յարսու փարս անել տայ, որ դաղուած սիրտը հովանայ։ Հաշուետետրում երես 8-ն պարոն Համբարձում Ազիզեանից ստացած յանուն լուսագնի 13 ր. 40 կոպեկի փոխարէն գրել էր մատեանում ստացուեց 2 ր. 50 կոպեկ ու այնպէս 1908 թուականի հաշուէտետրում տպագրուած հրապարակել։ Եւ երբ գողոնը ՝ի լոյս հանուեց, այն ժամանակ Պապովը իւր ասելով արդարացաւ այդ գողոնի մէջ այն կոնսիստորեայի միջոցով, որի ձեռքից մեր վերաբերմամբ իւր հաշուետետրում եախայ է պատուում։ Գրում է, Ազիզեանցին զօռով կանչել տուեցի կոնսիստորեայ, եւ վերջը իմացուեց որ պարոնը տէր Գրիգորի

ինչ որ ազգականն է եղել։ Պապովը զարմանքների աշխարհում աչքախփուկ խաղալիս թող մտաբեր է և այն, որ Համբարձում Ազիզեանից իւր գողոնը ծածկելուն օգնութեան հասաւ այն ժամանակուան կոնսիստորեայի նախանդամ Համայակ վարդապետ տէր Բարսեղեանը. վերջը իմացուեց, որ վարդապետը Պապովի տան կնքահայրն է եղել. իսկ Ազիզեանցը ինձ ազգական չ՚է։ Հաշուետետրում երես 9-ն ելք կամ ծախք տող 17 գրում է, Վեհափառ Հայրապետին հեռագրի եւ 15 փոշտի նամակների 9 ռուբլի 61 կ։ Ընթերցող հասարակութեանն ենք թողնում բնորոշելու պարոնի վարմունքը, մի շարաթուան մէջ 15 նամակներով և հեռագրով անհանգիստ անել Կաթողիկոսին և եկեղեցւոյ 9 ռուբլի 61 կոպէկը իւր կրքին զոհ տալը։ Պարոնի նամակները և 62 խօսքից կազմած հեռագիրը, պատիւ ունեցանք թերթելու Հայր Ա. ռաջնորդի մօտ՝ յանձնուած վեհափառ Հայրապետից։ 15 նամակները և հեռագիր կարդացողը, ինքը իրեն պիտի համարէ մի գժանոցի դիրեկտոր...։

Եկեղեցւոյ գրութիւնը վերնագրով, իւր հաշուետետրում, ամբողջ հինգթերթ Պապովը իւր նիւթած խնդրիքների պատմութիւնն է շռայլել, դնելով իմ վերայ 33 մեղադրական կէտեր։ Թէև իւր ժամանակին հասկացրինք պարոնին, իրեն չ՚վերաբերուող իրաւանց դէմ ոտնձգութիւնների անհեթեթու

թիւնները «տես 1908 թ. Հուվիս շաբաթաթերթի №№ 13, 15, 17, և 19. բայց հերստ մարդիք միշտ անցեալը մոռանում են։ Կարևոր եմ համարում Պապովի իմ վերայ դրուած մեղադրանքներից պարզել հետևեալը, այն է պարոն Արշակ Սարգսեանից ստացածս 6 ր. 40 կոպէկ, և պարոն տէր Մկրտչեանից 7 բուբլի լուսագին և եկեղեցում ջահեր վառելու փողերը ոտանալուն պէս յանձնել եմ եկեղեցւոյ հոգաբարձու պարոն Պետրոս Յովհաննեսեանին և գրաւոր յայտարարութեամբ յայտնել եմ կոնսիստորեային։ Որովհետև պարոն Պապովը այդ ժամանակ ոչ թէ երիցփոխանութիւն էր անում եկեղեցում, այլ իւր անդուլ ելու մտով մաշում էր ուրիշ հաստատութիւնների շէմքերը... Եկեղեցւոյ դրամ իւրացնելը երեցփոխը կարող է և ոչ թէ քահանան։ Երեցփոխի պաշտօնավարութիւնը յատուկ անձնական է նա չ'ի կարող իւր պաշտօնը ուրիշին յանձնել։ Որովհետև Պապովը ինքը ուրիշ բանեբով զբաղուած՝ իւր երիցփոխական պաշտօնը յանձնել էր Յովհաննէս Վարդանեանի անուն իւր համշերակին։ Կոնսիստորեայն այդ ապօրինի վարմունքը 'ի նկատի առած՝ ինձ հրամանագրեց պաշտօնը վարել, մինչևոր երիցփոխի ընտրութիւնը կայանալը։ Պարոն Պապովի իմ վերայ բարդած մեղադրանքների մասին պատասխանելու փոխարէն բերում եմ, նոյն իսկ Պապովին վկայ, վկայ իմ մա-

սին, ինձ համար, հէնց այն մեղադրական ակտերը կազմել տալուց ու դատաւորներ կարգելուց հէնց մի տարի առաջ։ Պապովը իւր և եկեղեցւոյ հոգաբարձութեան կողմից 20 բուբլիանոց երկփեղկեան մի գեղեցիկ ալբոմ է ընծայում ինձ։ Ալբոմի ձախ փեղկի առաջին երեսի վերայ իւր ձեռքով մակագրած այսպիսի բառերով «տէր Գրիգոր աւագ քահանայ Սուքեասեանցին իւր արիաջան ծառայութեան համար սբ. Գրիգոր լուսաւորիչ եկեղեցուց, Երիցփոխ Դիմիտրի Պապով, Երևան»։

Հարց. եթէ ես տոգորուած ու կոլոլուած եմ եղել այնքան պակասութիւնների ու այլանդակութիւնների մէջ, որ աշխատել է մեզ Պապովը ցոյց տալ ժողովրդի առաջ, ինչու հոգաբարձուք և երիցփոխը ինձ ալբոմ ընծայեցին իմ արիաջան ծառայութեանս համար։ Ուրեմն եկեղեցւոյ հոգաբարձուներից և երեցփոխից ճանաչուած արիաջան քահանան մի տարուան մէջ չ'ի կարող ծուլութեան, անկարողութեան և անիմաստութեան անդունդը գլորուել։ Կամ նախկին երեցփոխ Պապովն ու եկեղեցւոյ հոգաբարձուքն են սխալուել ինձ ալբոմ ընծայելիս, և կամ Պապովն է իւր խելքը խարաբ արել վերջին մի տարուան մէջ։ Պապովը ինքն էլ է խոստովանում ասածս, իւր հաշուատետրի երես 12. տող 10-ի մէջ ես և քահանաներս մինչև այդ «այսինքն 1909 թ. Մայիս» չափից դուրս

լաւ յարաբերութեան մէջ էինք և այլն։ Անցնենք Պապովի սարքած դատաւորներին ինձ դատապարտելու համար, այսքանը կասեմ, որ իւրաքանչիւր եկեղեցւոյ ծխականների իրաւունքն է եկեղեցւոյ նիւթականի, տնտեսականի և ծառայողների մասին կարգադրութիւններ անելու, կատարելու իրաւասութիւնը։ Պ. Պապովի ընտրած ութն դատաւորների ոչմէկը եկեղեցւոյ ծխականներից չ'էին, հետևապէս նորանց արած քննութիւնը ու դատը ապօրինի էր, նոյնպէս և ապօրինի էր Պապովի կայացրած 1909 թ. Մայիսեան ժողովը քաղաքացիներից, որը հէնց ապօրինի էլ ճանաչուեց ու ամմենքը դուրս գնացին, իսկ ութն դատաւորների մասին յետոյ գրսևում ու շուկայում ստորագրութիւնք հաւաքելը Պապովի փութկոտութեամբ նոյնպէս ապօրինի էր։ Իմ կողմից պ. պ. դատաւորներին դատի կանչելու գործը յետ վերառայ դատարանից բարձրապատիւ Մատթէոս վարդապետի պատուէրով «իմա Կաթողիկոսի»։ Գալով Պապովի հաշուետեսերում շեշտած երես 17. վերջին տողը-քամակից կպցրել էր տէր Գրիգորի ինչ որ մեր գուշակած մեղայականը հինգ մարդու ստորագրած խնդիրքի հետ միասին և այլն։ «Հինգ մարդիքը իրեն սարքած դատաւորներից էին» Այդ մեղայականի մէջ թափած արցունքներին հաստատելով ներել էր Վեհափառը և այլն։ Պապովի երևակայած

մեղայականին ես ուտկայ եմ անուանում։ Այլ այն որ արդարև պատահել ու պատահում են ոչ թէ միայն ինձ, այլ թէ բոլոր քահանաներին, որ անընդհատ ու միշտ եկեղեցի յաճախել չ'են կարողանում զանազան պատճառներով, որի մէջ գտնուել եմ և ես. եթէ այդ է Պապովի վրդովման տրտնջումը ու իմ դէմ գրգռուելու պատճառը, դորա համար խօսքեմ տալիս, որ այդ թերին լրացնեմ։ Սհա սա է եղել այն գիրը, որը ես տուել եմ հայր Մատթէոս վարդապետին, որ Պապովի հարայ հրոցի ձայնը կարուէր վեհի տականջից և թէ դաւի գալմաղալին վերջ դրուէր։ Բայց այսպիսի մի գիր տալը չ'է նշանակում մեղայական։ Հաշուետեսերի երես 4. Պարոնը սանձարձակ կերպով կոպիտ. բռի հայհոյանքներ թափելուց յետոյ՝ բոլոր հոգևորականութեան հասցէին, անուանում է նորանց տգէտ, անամօթ ու լիրբ։ Յետոյ ինքն իրեն հարց է տալիս, ինչի են պէտք այդպիսի հոգևորականները կամ Աստծուն կամ մարդկանց։ Եկեղեցին դառելէ մեր հոգևորականութեան համար միայն ծիսակատարութեանց պաշտօնավայր։ Աւելացնում է չ'եմ ուզում ասել զանազան տեսակ անօտիապաշտութեանց մասին, որոնք են գործել մեր եկեղեցում, շնորհիւ ժամանակի ոչ պակաս տգէտ հոգևորականութեան։ պատասխանը այսէ» Մենք մեզ իրաւունք չ'ենք համարում Պապովի հայհոյանքներին հայ-

հոյանքով պատասխանել, միայն այսքանը կասենք, որ իւրաքանչիւր մարդ ինքը իրեն նման կ'խօսի, օրինակ ագռաւը՝ սոխակ, կամ բուէճը՝ ծիծառ դառնալ չ,են կարող։ Հարկաւ Պապովի և նմաններից ամբաստանուած հոգևորականները ոչ Աստծուն են պէտք և ոչ մարդկանց, իսկ ինքը պարոն Պոպովը և Աստծուն է պէտք իւր ճոխ հայհոյանքներով և մարդկանց է պէտք, մանաւանդ երևանցիներին իւր հայ լեզուի ուսուցչութեամբ տեղւոյս գիմնազիայում։ Պարոն Պոպովին միանգամ ընդ միշտ հաւատեացնումենք, որ մեր եկեղեցում ոչ մի ոնոտիապաշտութիւն մուտք չ'է գործել ու չ'կայ էլ։ Այլ մի քանի նորաձև պատկերներ, որ յատուկ Ձեր ջանքերով, ձեր երիցփոխանութեան ժամանակ մտցրիք Ս.լուսաւորիչ եկեղեցին որպէս չարչարանք, այդ է նորամոլծն ու ոնոտիապաշտականը, որ դուք մըտցրեցիք եկեղեցւոյ մէջ և ոչ ձեր ակնարկած տգէտ հոգևորականները, բայց այդ էլ գիտուն մարդու խելքի բան չ'էր։

Գիտուն մարդու բան չ'էր և այն, որ երիցփոխը տէր-տէրների վերայ հերսոտած՝ բարկացած՝ իւր հրաժարականն ու երիցփոխանական արկղի բանալիները կոնսիստորեայի ու Սինոդի վերայից լոք տալով՝ ուղարկում է վեհափառ կաթողիկոսին 15 նամակով հեռագիրներով հանդերձ, և դեռ այդպիսի արարքը պարծանքով է շեշտում իւր

հաշուետետրի մէջ։ Պետական ու եկեղեցական օրինաց տրամադրութեամբ Երիցփոխը միայն եկեղեցւոյ տնտեսականի իրաւասուն է։ Բայց Պոպովը մէջ ընկաւ ու խառնուեց խառնշտորեց և քահանաների իրաւաստութեան, և կոնսիստորեայի, և Սինոդի, և Տեղակալի, և Կաթողիկոսի, և ոստիկանատների, և նահանգապետի և այլն։ Քրտնամխած չարչարուեց ժողովրդեան գրգիռ ստեղծել իւր թայֆաներով, բայց 'ի հարկէ ոչինչ չ'ը շահուեց և այս բոլորը 'ի հարկէ գիտուն, խելօք, ամօթխած ու պարկեշտ մարդու արարք չ'էր։ Պ. Պոպովի հաշուետետրի յաւաջաբանից քաղումենք հետևեալ դիտողութիւնները։ *Բոլոր լուսաւորեալ երկրներում, որ կողմ որ նայէք, ամեն մի հիմնարկութիւն, կամ ամեն մի պաշտօնեայ լինին դորանք պետական կամ հասարակական։ ենթարկուած են որոշ հսկողութեան պատասխանատուութեան իրենց գործավարութեան համեմատ ինչքան բարձր է պաշտօնը, այնքան մեծ է պատասխանատուութիւնը։ Մինչդեռ մեզանում այդպիսի քանի վերաբերեալ դիտողութիւն հանգամ կարծես ծաղրի է ենթարկուած։* Դորան կ'պատասխանենք այսպէս.— Այո՛ ճիշտ և իրաւացի է ձեր դիտողութիւնը հէնց գլխաւորապէս ձեր հայ լեզուից ուսուցչութեան պաշտօնի մասին՝ տեղւոյս արական Գիմնազեայում։ Պարոն Պոպով, դուք հայ

լեզուի ուսուցչութեան ինչ՞ չ ցենզ, արտօնութիւն ունիք։ Ո՞ր հայ դպրոցն էք աւարտել։ Չէ՞ որ Ռուսաց ուսուցչական սիմենարիայն հայ լեզուի ուսուցման ցենզ չ՚ի տալիս իւր սաներին։ Իսկ դուք ո՞ր իրաւամբ քիթ էք պարզել ու տեղաւորուել Գիմնազեայում հայ լեզուի ուսուցման ուսուցչի պատասխանատու պաշտօնում։ Դուք հայերէն գիտէք, որ կարողանաք հայ մանկանցն այբուբէնը սովորեցնել։ Ձեր այդպիսի կապուտ կողոպուտի անունն ինչ է։ Լրագրութեան մէջ անգամ խոստովանեցան ձեր այդ չոփուչտռի մասին, բայց դուք էլի մնում էք նոյն հիմնարկութեան մէջ որպէս հայ լեզուի ուսուցիչ խեղճ ու կրակ հայ սաների։ Բերանիցդ մինչև ականջներդ որքան հեռաւորութիւն կայ։ Երևի ձեր ասածը Դուք կամ չ՚էք լսում կամ քառանկաչի էք տալիս։ Աւետարանի պատուէրն է այս, կեղծաւոր, հան նախ զգերանդ յականէ քումմէ և ապա հայեսցիս հանել զշիղական եղբօր քոյ։

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

Ամառ ժամանակ երկու թարաքեամայ թուրքեր մոթալի տակերով երկու եղներ բարձած քաղաք էին բերում ծախելու, սարից ցած իջնելով պատահեցին մի հեղիղատի։ Թուրքերից մինը իւր եզը ցամաք հեղիղատից անցկացրեց միւս կողմը։ Իսկ միւս թուրքը իւր եզնով հեղիղատի մէջ տեղն էր, որ հեղեղը վրայ տուեց եզը գլորուեց, մոթալները հեղեղը տանում էր, թուրքը չանք էր անում բռնել մոթալի տակերից մինը գոնէ, ձեռքը գցեց ու բռնեց բրդոտ տիկը, բայց տիկը ոչ թէ մոթալի տիկն էր, այլ վերևից հեղեղի մէջ ընկած մի արջ, որ գլորուելով հասել էր թուրքին ու իրար առան թուրքն ու արջը։ Մինը միւսին ջրի տակը խրելով հեղեղի հոսանքի հետ գլորվում-էին։ Թուրքի ընկերը ցամաքից ձայն է տալիս, Հասան, ձեռք քաշիր մոթալից, հեղեղը շատանում է դուրս արի, կ՚խեղդուես» Հասանը պատասխանում է ես մոթալից ձեռք եմ քաշել, մոթալը ինձնից ձեռք չ՚ի քաշում։ Թուրքերէնը այսպէս է-ման մոթալատան ալ չաքմիշամ, մոթալ մաննան ալ չաքմիր։

24-ն Դեկտեմբերի 1910 թ. Երեւան Գրիգոր աւագ Քահանայ Սուքիասեանց։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/XI-1922
имени Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

4158

ՀՀ Ազգային գրադարան
NL0031401

8254

4018